ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 597 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 6-Ի N 277-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Սահմանել, որ «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 00074765) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2025 թվականի մայիսի 6-ի «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Լույս հայի աչքերին» ծրագրի մասին» N 277-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Վելոֆիրմա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (Դաբլթրի բայ Հիլթոն Հոթել Երևան Սիթի Սենթր) հետ (ՀՎՀՀ՝ 02617333) 2025 թվականի օգոստոսի 18-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նա-

խատեսվում է 2025 թվականի սեպտեմբերի 19-20-ն ընկած ժամանակահատվածում հյուրանոցային ծառայությունների մատուցում՝ 2,000,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Վելոֆիրմա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (Դաբլթրի բայ Հիլթոն Հոթել Երևան Սիթի Սենթր) հետ (ՀՎՀՀ՝ 02617333) 2025 թվականի օգոստոսի 18-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2025 թվականի սեպտեմբերի 26-27-ն ընկած ժամանակահատվածում հյուրանոցային ծառայությունների մատուցում՝ 4,000,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

09.09.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ